


ՊՐՈՖ. Ռ. Ն. ԳՅԱՆՋԵՑՑԱՆ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՑՈՂ

ՀԱՅՈՒՏՏՐԱՏ



ՊՐՈՖ. Ռ Ն. ԳՅԱՆՁԵՑՄԱՆ

ՀՅ
ՀՅ

616.995

4-65

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՑՈԶ

Հ 1658

Հանրամատչելի գիտական ակտարկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆՐԵՎԱՆ 1946

Проф. Р. Н. ГЯНДЖЕЦЯН
ТУБЕРКУЛЕЗ
Научно-популярный очерк
Издание Саниресоветотдела Министерства
Здравоохранения Арм. ССР
(на армянском языке)
Армгиз, Ереван, 1946

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տուբերկուլյոզի վաղ հայտարերման և տուբերկուլյոզով հիվանդների ճիշտ սպասարկման հիմնական խոչընդուռ են հանդիսանում ոչ բավականաչափ ծանոթությունը տուբերկուլյոզի դեմ ուղղված պայքարի գործնական կազմակերպման հարցերի հետ, աշխատավոր մասսաների ոչ բավականաչափ ծանոթությունը բավական բազմատեսակ ընթացող այս հիվանդության բնույթի, տարածման ուղիների ու սկզբնական արտահայտությունների հետ, որն ունի սպեցիֆիկ մի առանձնահատկություն, — ախտահարում է մարդու բուրր օրգանները, և առաջին հերթին թոքերը:

Եթե, մի կողմից, բժշկական ամբողջ մասսան (և ոչ թե միայն մասնագետները) պետք է լավ ծանոթ լինի տուբերկուլյոզի կլինիկային և պրոֆիլակտիկային, մյուս կողմից, աշխատավոր մասսաները պետք է լավ տեղյակ լինեն այս հիվանդության բնորոշ առանձնահատկություններին, պրոֆիլակտիկ կարգի ձեռնարկումներին, որոնք հնարավորություն են տալիս կանխել ինֆեկցիայի վնասը:

Այս տեսակետից մենք ունենք հսկայական ռեզերվ ներ, որոնք մինչև այժմ բավականաչափ չեն օգտագործված:

Իր ժամանակին հայտնաբերել տուբերկուլյոզով հիվանդներին, այդ հիվանդության նկատմամբ կասկածելիներին, որոնք մանրակրկիտ հսկողություն են պահանջում, — սա հանձնարարվում է ամենից առաջ բժշկական ընդհանուր մասին: Հիվանդներին չըջապատող միջավայրը պետք է նույնպես լավ իրազեկ լինի,

որպեսզի այդպիսի հիվանդներն իր ժամանակին ուղարկվեն բժշկական քննության:

Այն ընտանիքները, որտեղ տուբերկուլյոզով հիվանդներ կան, պետք է հանդամանալից ցուցումներ ստանան՝ համապատասխան նախապահանական միջոցներ ձեռք առնելու համար:

Եթե այս ակնարկը լրայն հասարակությանը հնարավորություն է տալիս ավելի մանրամասնորեն ծանոթացնելու տուբերկուլյոզին: Այս հանրամատչելի հրատարակությունը, այնուհանդերձ հենվում է տուբերկուլյոզին վերաբերող հարցերի ավելի, մանրամասն ու գիտական մեկնարանության վրա:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՀԱՐՑՈՒՑԻՉ

Տուբերկուլյոզի հարուցիչը հայտանարեցված է Ռուբերտ Կոխի կողմից, 1882 թվականին: Տուբերկուլյոզի բացիներ կարելի է գտնել տուբերկուլյոզով տառապող հիվանդի զանազան արտաթորանքներում, — խորին մեջ, թարախում, պլեվրալ էքսուղատում, կղկղանքում, մեղում (եթե երիկամներն ախտահարված են տուբերկուլյոզով) և ստամոքսը ողողող ջրերում: Կոխի բացիներն իրենցից ներկայացնում են շատ բարակ ցուպիկներ էրիտրոցիտի (արյան կարմիր գնդիկի) լայնքի $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$ -ի երկարությամբ: Տուբերկուլյոզի բացիներն ունեն նշանակալից պոլիմորֆիզմ (բազմաձեփություն):

Վերջին ժամանակներս խոսում են Փիլտրող վիրուսի կամ ուլտրավիրուսի մասին, այսինքն բարակ Փիլտրի միջոցով անցնող, սովորաբար պահվող միկրոբների մասին, որոնց առանձին մասնիկները կենդանիներին ներարկելիս առաջ են բերում տուբերկուլյոզի ատիպիկ ձևեր: Արդյոք դա տուբերկուլյոզի վիրուսի ինքնուրույն մի ձևն է, թե՞ դրանք նույն միկրոբների մանրիկ բեկորներն են,— այս հարցը վերջնականացելեած չի լուծված:

Գոյություն ունի տուրերկուլյողի բացիլների Յ
տիպ. մարդկային, եղան և թռչունների: Թռչնային
տիպի նկատմամբ առանձնապես զգայուն են համերն ու
աղավնիները: Մարդու մոտ էլ նկարագրված են տու-
րերկուլյողային հիվանդության դեպքեր՝ պայմանա-
վորված թռչնային տիպի բացիլներով: Տուրերկուլյողի
բացիլների մարդկային ու եղան տիպերի միջև գոյու-
թյուն ունեն մորֆոլոգիական աննշան տարրերություն-
ներ:

Մարդկային տիպի բացիլները փոքր դողաներով
ախտածին չեն եղջերավոր անսասունների համար. բա-
ցիլների եղան տիպը համեմատաբար քիչ ախտածին է
մարդու համար: Ընդհանրապես պետք է նշել, որ այդ-
երկու տիպերի դիֆերենցիացիան խիստ դժվար է. ըստ
երեսութիւն մենք գործ ունենք այն միկրոբի տարր-
տեսակների հետ, որը տարրեր ժամանակ դառնվելով
տարրեր օրգանիզմներում, զանազան հատկություններ
է ձեռք բերում:

Եղան տիպի ցուպիկներ մարդու մոտ գտնում են
տուրերկուլյողի արտաթոքային ձեերի դեպքում, երբ
ախտահարված են լինում ավշային դեղձերը, որովայ-
նամիզը, ոսկորները և այլն:

Մի քանի, հեղինակների կարծիքով տուրերկուլյողի
բացիլները պարունակում են մեծ քանակությամբ
ճարպային և ճարպանման նյութեր, որոնք տուրերկուլ-
յողի բացիլին մեծ գիմադրողականություն են տալիս
Փիզիկական ու քիմիական ագենտների ներգործության
նկատմամբ, որը մեծ դժվարություններ է ստեղծում
տուրերկուլյողի ժամանակ հականեխում կատարելիս:

Տուրերկուլյողային ցուպիկների տոկսիկությունը
կապված է այն նյութերի հետ, որոնք մտնում են
նրանց մարմնի բաղադրության մեջ: Կոխը 1892 թվա-
կանին այդ նյութերից մի քանիսը առանձնացրեց իրեն
որոշակի մի զանգված, որը նա տուրերկուլին անվա-
նեց: Որոշ միջավայրում բացիլներն աճեցնելուց հետո

ստաքացման միջոցով նրանց ստերիլիզացիայի և չողիաց-
ման են ենթարկում մինչեւ սկզբնական ծավալի $\frac{1}{10}$ -ը։
Հեղուկը դուռմ են՝ տուբերկուլյոզի բացիլներից ազա-
տելու համար. հենց սա էլ կլինի այսպես կոչված՝ տու-
բերկուլինը կամ «Կոխի հին տուբերկուլինը»։ Տուբեր-
կուլինի ներգործությունն այն է, որ նրա ամենափոքր
դոզաները տոկսիկորեն ազդում են տուբերկուլյոզի
վարակված օրգանիզմի վրա, բայց տուբերկուլյոզից
զերծ օրգանիզմի համար. տուբերկուլինը բոլորովին
անլինաս է։ Տուբերկուլյոզով վարակված մարդու մաշ-
կի, մեջ տուբերկուլինը ներարկելու դեպքում ստացվում
է տեղական բորբոքման ռեակցիա։ Տուբերկուլյոզով
հիվանդի վրա տուբերկուլինը, բացի տեղական ռեակ-
ցիայից, կարող է առաջ բերել նաև ընդհանուր և օջա-
խային տոկսիկական ռեակցիա։ Տուբերկուլինի այդ
հատկությունն օգտագործում են դիագնոստիկական
(Պիրկեի ռեակցիա) և բուժական նպատակներով (տու-
բերկուլինոթերապիա)։

Տուբերկուլյոզի բացիլների վիրուլենտությունը
միատեսակ չէ. այն մշտական չէ և ոչ էլ անփոփոխ։
Տուբերկուլյոզի բացիլները երկարատև ժամանակվա-
ընթացքում հատուկ բաղադրության սնման տարրեր
միջավայրերում աճեցնելու միջոցով կարելի է թու-
լացնել նրանց վիրուլենտությունը։ Այս հատկությու-
նից օգտվեցին Կալմետը և Գերենը և ստացան միկրոբ-
ների հատուկ ձև՝ թուլացած վիրուլենտությամբ, որ
կոչվեց BCG (BCЖ)։ Որը տալիս է պատվաստանյութ-
տուբերկուլյոզի դեմ նորածինների պատվաստման հա-
մար։ BCG իրենից ներկայացնում է առանձին տիպի
տուբերկուլյոզային բացիլներ, որոնք աճեցվել են 13
տարվա ընթացքում և ընդհանուր առմամբ անցել են
230 կրկնացան։ Այդ պատվաստանյութը մարդու օրգա-
նիզմի մեջ մտցնելն առաջ է բերում աննշան փոփոխու-
թյուններ, որոնք արագությամբ անցնում են, բայց
դրա փոխարեն մարդու մեջ ստեղծվում է նշանակալիք
իմունիտետ՝ հետագայում տուբերկուլյոզով վարակվե-

լու նկատմամբ։ Ներկայումս կալմետ-Գերենի պատշաստանյութը լայն չափով գործադրում է նորածինների վրա, հետագա վարակումները կանխելու համար։

ՏՈՒԲԵՐԿՈՒԽԱՅՈԶԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ԱՂԲՅՈՒԽՆԵՐԻ

Տուբերկուլյոզով մարդկանց վարակվելու գլխավոր աղբյուրը թոքերի տուբերկուլյոզով հիվանդ մարդն է։ Հիվանդի վարակելիության աստիճանը պայմանավորվում է թե՛ խորիս հետ արտաթորվող վարակիչ նյութի առատությամբ և թե այդ նյութը արտաքին միջավայր ընկնելու եղանակով։ Բայց չպետք է կարծել, թե ամեն մի խորիս տուբերկուլյոզը միկրոբներ է պարունակում։ Դա կախված է խորիսի հետ կոխի բացիլներ արտադրելուց, տուբերկուլյոզով հիվանդները բաժանվում են երկու տեսակի։ բաց և փակ տուբերկուլյոզային պրոցես ունեցողներ (կոխի բացիլներ արտադրողներ և չարտադրողներ)։ Այս բաժանումը նշանակալից չափով պայմանական է և կախված է հետազոտության մանրակրկիտությունից։ Այս տեսակետից կրկնակի անալիզները, խորիսի ճիշտ հավաքելը հետազոտման համար՝ մեծ դեր է խաղում միկրոբները հայտաբերելիս։ Բացի այդ, ճիշտ չէ, որ տեղի է ունենում բացիլների մշտական արտաթորումը, կրկնվող հետազոտությունները պարտադիր են, մանավանդ այն դեպքում, երբ բացիլներ հայտաբերելուց հետո հետևյալ հետազոտությունները չեն ցույց տալիս նրանց ներկայությունը։ Դրա հետ մեկտեղ այն հիվանդների նկատմամբ, որոնք ապաբացիլային (միկրոբներ չարտադրող) են դարձել, պետք է կրառել նույն սանիտարական պրոֆիլակտիկ ձեռնարկումները, ինչ որ բաց տուբերկուլյոզային պրոցես ունեցող հիվանդների նկատմամբ։

Տուբերկուլյոզի ինֆեկցիան հիվանդ մարդուց առողջին կարող է անցնել հետևյալ ճանապարհներով։

1) Այն կաթիլների հետ, որ հիվանդը արտաթո-

բում է հաղալու, փոշտալու, խոսելու ժամանակ (կաթիլային ինֆեկցիա) :

2) Փոշու մասնիկների հետ (փոշու ինֆեկցիա) :

3) Երբ առողջ մարդն անմիջականորեն չփում է վարակիչ նյութի հետ և այդ նյութն ընկնում է լորձաթաղանթների կամ վնասված մաշկի վրա (կոնտակտային ինֆեկցիա) :

Կաթիլային ինֆեկցիա: Կաթիլային ինֆեկցիան առաջանում է տուբերկուլյոզով հիվանդի հաղալուց, խոսելուց, փոշտալուց: Հիվանդի բերանից որոշ հեռավորությամբ դնելով ներկված թիթեղներ, կարելի է համոզվել, թե տուբերկուլյոզով հիվանդն ինչ քանակությամբ կաթիլներ է ցրում: Այդ կաթիլների հետազոտումը հաճախ հայտնաբերում է կոխի բացիլներ: Կաթիլների, քանակությունը մեծ է մանավանդ հիվանդին ամենամոտիկ տեղում, հիվանդի դեմքից 60 սմ. հեռավորությամբ կաթիլներն ավելի քիչ են լինում և նրանից 1 մ. հեռավորությամբ գրեթե բացակայում են: Հիվանդն ամենամեծ քանակությամբ կաթիլներ է ցրում հաղալու ժամանակ, ավելի քիչ քանակությամբ՝ խոսելիս:

Հիվանդից 1 մ. հեռավորությամբ կաթիլային ինֆեկցիայի վտանգն աննշան է:

Փոշու ինֆեկցիա: Փոշու ինֆեկցիայի աղբյուրներ են հանդիսանում՝ չորացած խորիս և հազի չորացած կաթիլները: Հազի կաթիլները, մանավանդ ավելի ծանր կաթիլները, արագությամբ նստում են հատակին: Չորանալուց հետո հազի կաթիլները փոշի են դառնում: Մանիստարական տեսակետից բարեկարգ բնակարաններում հատակը հաճախակի և թրջված ավելով սրբելու և բավականաչափ օդափոխության դեպքում չորացած խորիս մասնիկները և հազի կաթիլները կչքանան նախքան փոշի դառնալը:

Կոխի բացիլները մեծ դիմացկունություն ունեն և կարող են երկար ժամանակ պահպանել իրենց կենսունակությունը: Մութ տեղում պահպող սպիտակեղենի

վրա նրանք կենսունակ են մնում 60—350 օրվա ընթացքում, սփոված լույսի տակ՝ 39—60 օրում։ Փոշիացած խորխում Կոխի բացիլները իրենց վիրուլենտությունը պահպանում են 4—10 ամսվա ընթացքում։

Կոնտակտային ինֆեկցիա։ Կոնտակտային ինֆեկցիան փոխանցվում է այն առարկաների միջոցով, որոնք աղտեղված են լինում խորխի մասնիկներով, հազի կաթիլներով կամ նստած փոշիով, որը կոխի բացիլներ է պարունակում։ Կոխի բացիլներն աղտեղված առարկաների միջոցով կարող են ընկնել առողջ մարդու մաշկի կամ լորձաթաղանթի վրա (բերանի, քթախոռոչի, մարսողության օրգանների, աչքերի լորձաթաղանթի վրա)։ Ինֆեկցիայի այս տեսակը խիստ վտանգավոր է փոքրիկ երեխաների, մանավանդ գեղձքայլողների համար, որոնք իրենց բերանն են առնում իրենց հանդիպող ամեն տեսակ առարկաներ։ Երեխան կարող է վարակվել հիվանդի առօրյա օգտագործման առարկաներից (երեսորբիչ, ատամի խողանակ, թաշկինակ), համբուլյոներից։

Կոնտակտային ինֆեկցիայի աղբյուր կարող են լինել սննդամթերքները, եթե դժանք վարակված են կոխի բացիլներով։ Դա հնարավոր է այն դեպքերում, երբ առողջ մարդը և տուբերկուլյոզով հիվանդն ու տուտում-խմում են մի ընդհանուր ամսնից, երբ մթերքների վրա են ընկնում տուբերկուլյոզով հիվանդի խորխի կաթիլները (կերակրի, պատրաստում), երբ մթերքների վրա ճանձեր են նստած լինում և այլն։ Սննդամթերքների միջոցով վարակվելու վտանդը նվազում է մի կողմից դժանք եռացնելու միջոցով և մյուս կողմից մարսողության օրգաններից վարակումը շատ ավելի դժվար է կատարվում, դրա համար զգայի չափով ինֆեկցիա է պահանջվում։ Այնուամենայնիվ անհնարին չէ սննդամթերքների միջոցով տուբերկուլյոզով վարակվելը, մանավանդ երեխաների համար։ Տուբերկուլյոզային վարակիչ հիվանդներն իրենց աշխատանքում չափետք է գործ ունենան սննդամթերքների հետ։

Տուբերկուլյոզով հիվանդի ամանը պետք է եռացնել ուտելուց հետո։ Տուբերկուլյոզով հիվանդի կերակը մնացորդները կարող են ընտանի կենդանիների վարակման աղբյուր դառնալ։

Որպես տուբերկուլյոզի ինֆեկցիայի աղբյուր զգալի տեղ է բոնում տուբերկուլյոզային կոմերի կաթը, ինչպես նաև կաթնամաթերքները (յուղը, պանիրը և այլն), որովհետեւ եղջերավոր անասունները բավական հաճախ են հիվանդանում տուբերկուլյոզով։ Կոխի բացիների եղան տիպը գյուղում ապրող հիվանդների մեջ ավելի հաճախ է պատահում, քան քաղաքների։ Սա ցույց է տալիս, որ գյուղական, պայմաններում կաթնամթերքները, որպես տուբերկուլյոզով հիվանդանաւոր աղբյուր, ավելի նշանակալից դեր են խաղում, քան քաղաքային պայմաններում։ Հում կաթը երեխաներին կարելի է տալ միայն այն դեպքում, եթե լիովին հավատացած ես, որ կոմը տուբերկուլյոզով վարակված չէ։ Երեխային տուբերկուլյոզով հիվանդ մոր կաթով կերակրելը նույնպես որոշակի վտանգ է ներկայացնում։ Ծծկեր երեխայի վարակման համար գլխավոր նշանակություն ունի ոչ թե կաթով կերակրելը, այլ կաթիլային և կոնտակտային ինֆեկցիան՝ մոր և երեխայի շփման դեպքում։ Դրա համար էլ հիվանդ մայրը երեխային կերակրելիս պետք է նախադպուշության հատուկ միջոցներ ձեռք առնի, պետք է երեսին մառա կապի, յուրաքանչյուր կերակրումից առաջ ամեն անդամ թվանա ձեռները, կուրծքը որը սպիրոտիվ, իսկ պտուկները՝ բորակաթթվի լուծույթով։

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՕՐԳԱՆԻ ԶՄԻ ՄԵԶ ԹԱՓԱՆՑԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Կոխի բացիների՝ մարդու օրգանիզմի մեջ թափանցելու հնարավոր ուղիներն են՝

1) Մաշկը։

2) Մարսողության ուղիների (բերան, բերնախոր-)

առջ, կերակրավող, ստամոքս, աղիքներ)՝ լորձաթաշաւզանթը:

3) Շնչառության ուղիները (քիթ, չնչավող, բրոնխներ, թոքերի արվիոնները):

4) Աչքերի լորձաթաղանթը:

Մաշկը, պետք է ասենք, քիչ դեմ է խաղում բաշիլը թափանցելու ժամանակ, թեպետև նկարագրված են այդպիսի դեպքեր: Մաշկը տուրերկուլյողով ախտահարում է մեծ մասամբ այն բացիլներով, որոնք նրա մեջ թափանցում են որևէ օրգանի տուրերկուլյողի օջախից արյան հոսանքի միջոցով:

Մարտղության օրգանների միջոցով ավելի հաճախ է թափանցում տուրերկուլյողի ինֆեկցիան: Դրա համար կան նսղաստավոր պայմաններ՝ ինֆեկցիան կարող է թափանցել սննդամ թերքների հետ, ստամոքսի հյութի և աղիքների աղդեցությունից բացիլները չեն կորցնում իրենց վիրուլենտությունը. բացիլները կարող են անցնել մարսողության օրգանների պատերի միջով: Գոյություն ունի մի կարծիք, որ կոխի բացիլները, անցնելով աղիքների պատերի միջով, որովայնի լիմֆատիկ գեղձերում սկզբնական օջախ են առաջնում, իսկ այնտեղից ավշային և արյունատար ուղիներով ընկնում են ուրիշ օրգանները, մատնալորապես թոքերը: Այսպիսով տուրերկուլյողի բացիլները, որոնք թափանցել են մարսողության ուղիների պատերի միջով, կարող են թոքերի սկզբնական հիվանդացում առաջանանել:

Շնչառության ուղիները ամենամեծ դերն են ինաշղում տուրերկուլյողի ինֆեկցիայի ներթափանցման մեջ: Ամենից հաճախ սկզբնական օջախը դտնվում է թոքերում, որ ցույց է տալիս ավելի շուտ չնչառական ուղիների միջոցով տեղի ունեցող սկզբնական ախտահարումը, հակառակ այն կարծիքի, թէ տուրերկուլյողի սկզբնական վարակման համար մեծ նշանակություն ունեն աղիքները: Այսպիսով պետք է կարծել, որ

բացի լներն ամենից հաճախ այերոգեն ճանապարհներով
են ներթափանցում:

Բնածին տուրերկուլյոգ: Կան հեղինակներ, որոնք
ենթադրում են, թե ընածին տուրերկուլյոգը հաճա-
խակի երեսույթ է: Բայց մեծամասնությունն այն կար-
ծիքին է, թե ընածին տուրերկուլյոգի դեպքերը շատ
հազվադյուս են: Բնածին տուրերկուլյոգի դեպքերը
պետք է բացատրել պաղի ներարդանտային վարակ-
մամբ, որ լինում է գլխավորապես պլացենտայի միջո-
ցով:

ՕՐԳԱՆԻԶՄԻ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՒՐԵՐԿՈՒԼՅՈԶԸ

Տուրերկուլյոգի միևնույն ցուպիկը մի հիմանդի-
մեջ ուժեղ պրոցես է առաջացնում, մյուսների մեջ—
արագորեն մեղմացող բռնկում (ԵՇՊԱՌԿԱ), իսկ զգալի
թվով հիվանդների մոտ էլ գործը սահմանափակվում է
տարբեր տիպի խրոնիկական հիվանդությամբ՝ շատ թե
քիչ հաճախակի բռնկվող պրոցեսներով: Ինչո՞վ բա-
ցարել տուրերկուլյոգի արտահայտման այդ բազմա-
տեսակությունը զանազան անձանց մոտ, երբ մենք
գործ ունենք միևնույն հարուցիչի հետ:

Մարդու օրգանիզմում տուրերկուլյոգի ցուպիկը
ներթափանցում ից որոշ ժամանակ (3—8 շաբաթ) անց,
այսպես կոչված՝ ինկուբացիոն ժամանակաշրջանից
հետո մինչ այդ բացասական ռեակցիան դրական է
դառնում: Օրգանիզմը ցուցաբերում է մի առանձին
(ուժեղացած) զգայնություն տուրերկուլինի նկատ-
մամբ, որ սրբեն ցույց է տալիս վարակման վիճակը:
Օրգանիզմի, մեջ տուրերկուլյոգի ցուպիկների ներթա-
փանցման զգայնության այդ առանձնահատուկ զրու-
թյունը կոչվում է ալերգիկ դրություն: Տուրերկուլինի
նի նկատմամբ առողջ օրգանիզմը և վարակված, օրգա-
նիզմը տարբեր ռեակցիան են տալիս: տուրերկուլինի
դրական ռեակցիան, այսպես կոչված, Պիրկեր ռեակ-

ցիան, ցույց է տալիս, որ օրդանիզմը գտնվում է աշ-
ւերգիկ վիճակում, այսինքն առանձնապես զգայուն է
տուքերկուլյողի վիրուսի նկատմամբ։ Տուքերկուլյողի
ցուցիկների նոր ներթափանցմանը ալերգիայի վիճա-
կում գտնվող օրդանիզմը բոլորովին այլ ռեակցիա է
տալիս քան այն օրդանիզմը, ուր ունեու ինֆեկցիայի չի
ենթարկվել։ Սակայն, բացի այդ առանձնահատուկ
դպացնությունից, պետք է կարծել նաև, որ գոյություն
ունեն դիմադրողականության ներքին ֆակտորներ ևս,
որոնք կապված են ընածին կարդի մոտիվների հետ,
արտահայտվում են միջավայրի և առաջին հեր-
թին սոցիալական միջավայրի հետ կապված փոփոխու-
թյուններով։

Այսպիսով մենք պետք է նշենք հետևյալը։ Կոխի
բացիլը տուքերկուլյողի պրոցեսի զարգացման անհրա-
ժեշտ պայմանն է, նա է հիվանդության հարուցիչը։
Բայց հիվանդությունը զարդանում է միայն այն դեպ-
քում, եթիւ այդ «հարուցիչը» որոշ պատասխան է գըտ-
նում օրդանիզմի, կողմից, եթե օրդանիզմը իր կենսա-
կործունեության առանձնահատուկ փոփոխությամբ ո-
րոշակի ռեակցիա է տալիս դեպի վարակը։ Ահա բացիլ-
ների ընդերման նկատմամբ այդ առանձնահատուկ պաշ-
տասխանի արտահայտությունն էլ մենք գտնում ենք
տուքերկուլինի այն դրական ռեակցիայում, որի մա-
սին վերևում խոսեցինք, կամ այլ կերպ ասած՝ օրդա-
նիզմի, այն վերակառուցման մեջ, որը մենք ալերգիկ
անվանեցինք։ Այդ ռեակցիայի բնույթը և աստիճանը
մի կողմից որոշվում են տվյալ հարուցիչի հատկու-
թյուններով և մյուս կողմից միջավայրի տվյալ պայ-
մաններում արձագանքող օրդանիզմի առանձնահատկու-
թյուններով։

Այսպիսով, օրդանիզմի կողմից նման ռեակցիայի
երեան դալը բնորոշ է ընդհանրապես ամեն տեսակ վա-
րակիչ հիվանդությունների և մանավանդ տուքերկու-
լյողի ռեակտում, ուր այդ ռեակցիան ի հայտ է բերում
ապասվելիք յուրահատկությունը։

Բացի օրդանիզմի այդ պատրաստվածությունից, Կոխի ցուցիկը ներթափանցելուց հետո մենք պետք է ուշադրություն դարձնենք նաև այն հանդամանքի վրա, որ այդ ռեակտիվությունն ինքնին փոփոխական է և կախված է տվյալ սուբեկտի բնորոշ առանձնահատկություններից, ներքին միջավայրի բոլոր ֆակտորների փոփորձակցությամբ հանդերձ, արտաքին պայմաններին համապատասխան. դա օրդանիզմի դիմամիկ վիճակն է, նրա ռեակցիան արտաքին միջավայրի հանգեցակ: Սակայն բացի այդ արտաքին ֆակտորներից, ոչ բոնք փոփոխաման են ենթարկում օրդանիզմի ռեակտիվությունը, վերջինիս փոփոխությունը կապվածէ նաև մարդու հասակի հետ:

Այսպիսով օրդանիզմը իր հատկություններով բոլոր մարդկանց մոտ միատեսակ կայուն հող չէ տուբերկուլյոզի, ինֆեկցիայի զարգացման համար. այդ մի տատանվող հող է, որը ենթարկվում է շատ և բազմատեսակ՝ ֆակտորների՝ ազգեցության: Այսոելից էլ բխում է տուբերկուլյոզի արտահայտությունների բազմազանությունը, որ կախված է վարակի բնույթից, այսինքն միկրոօրդանիզմից և ամբողջ օրդանիզմից՝ մակրոօրդանիզմից:

ԹՌՔԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՑԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՏԻՊԵՐԸ

Մարդու տուբերկուլյոզի, զարդացումը կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի, առաջնային (ոքականական) և երկրորդային (ՎՏՈՐԿԱԿԱՆ), այսպես կոչված՝ ոեինֆեկցիայի, այսինքն կրկնակի վարակման ժամանակաշրջան:

Սկզբնական տուբերկուլյոզը զարդացումը է այն մարդու մեջ, որը մինչ այդ վարակված չի եղել տուբերկուլյոզով, և այդ տուբերկուլյոզը տալիսէ հիվանդության իր առանձնահատուկ պատկերը: Կազմվում է այսպես կոչված՝ սկզբնական օջախ, բայց սկզբնական

օջախի կազմակերպմանը նախորդում են բաղմաթիվ
բրոնխիոլիտներն, այսինքն մանր բրոնխիոլների բոր-
բռքումը, որովհետև բրոնխիոլների մանրագույն վեր-
ջույքներում նպաստավոր պայմաններ են ստեղծվում
բրոնխների միջուկ մուտք գործող օտար մասնիկների,
այդ թվում նաև կոխիքացիների նստելու համար:
Բրոնխիոլիտների մեծ մասը ներծծվում է, իսկ որոշ
մասն էլ միախառնվում է զբավիկով մուտակա թոքային
հյուսվածքը, շատ թե քիչ չափով պնեվմատիկ հնոց
(ՓՈԿՍ) է առաջացնում: Թոքի մեջ բորբռքման փոքրիկ
ֆոկուսը կազմում է սկզբնական ինֆեկցիայի օջախը:
Թոքի սկզբնական ինֆեկցիայի օջախն իրենից ներկա-
յացնում է պլեվրայի տակ տեղավորված ֆոկուս (պլ-
նեվմոնիայի տիպի), պերիֆոկալ բորբռքումով (բոր-
բռքում ֆոկուսի չուրջը): Միաժամանակ բորբռքման
պրոցեսն ընդուրկում է նաև թոքերի արմատում գտնվող
ավշային գեղձերը: Այսպիսով սկզբնական տուբերկուլ-
յողն իրենից ներկայացնում է բորբռքման մի փոքրիկ
հնոց (ՓՈԿՍ), միաժամանակ ախտահարելով բրոնխիալ
գեղձերը (թոքի արմատի մոտ): Այլ կերպ ասած ըս-
տացվում է այսպեսի զուգակցություն՝ սկզբնական օ-
ջախը բորբռքված գեղձը կոչվում է սկզբնական կոմպ-
լեքո: Այսպիսով սկզբնական օջախը հետագայում փո-
խանցվում է սկզբնական կոմպլեքսի:

Սկզբնական օջախի վիճակը մեծ մասամբ (մոտա-
վորապես 80 %) բարենպաստ է: Հաճախ տեղի է ունե-
նում ինքնապաքիցնում, տեղի է ունենում կծկում
(սմօրցիվանի), տեղի է ունենում պատճճավորում
(սնկափսուլյացիա), կրացում և ոսկրացում: Այդպիսի կր-
րացված սկզբնական օջախը կոչվում է գոնի օջախ:
Աննպաստ պայմաններում սկզբնական օջախը զարմանում
է տուբերկուլյոզային պրոցեսի զարգացման աղբյուր,
որովհետև սկզբնական օջախն իր մեջ պարունակում է
տուբերկուլյոզի բազմաթիվ բացիներ. տարածման
գլխավոր ճանապարհ են հանդիսանում ավշային անթ-
ները, ապա նաև արյունատար անոթները: Միաժամա-

նակ տուբերկուլյողային ինֆեկցիայի աղղեցության
տակ օրդանիզմը առանձին հատկություններ է ստա-
նում. անոթների պատերն այս դեպքում նպաստում են
տուբերկուլյողային ինֆեկցիայի տարածմանը թոքերի
հյուսվածքում: Այդ տարածումը կարող է դանդաղ ըն-
թանալ, ըստ որում այլևայլ օրդաններում, նաև թո-
քում առաջանում են սակավաթիվ, առանձնակի տու-
բերկուլյողային թմբիկներ (նցըքի), որոնք իրենց մե-
ծությամբ միատեսակ չեն լինում: Եթե կոխի բացիլնե-
րը սկզբնական օջախից մասսիվ կերպով անցնում են
անոթային սիստեմի հունը, առաջանում են առատ,
մանր, հավասարաչափ բշտիկներ, ստացվում է այս-
պես կոչված՝ միլիար տուբերկուլյող: Սա տուբերկու-
լյողի հեմատոզեն (արյան միջոցով) տարածման ուղին
է:

Բացի այդ, կարող է լինել օրդանների մեկուսաց-
ված (ազոլիրօվանու) ախտահարում: Եթե արյան միջո-
ցով տարածման առաջին տիպը մենք գտնում ենք գրւ-
խավորապես երեխաների մոտ, ապա ախտահարման
շրջ տիպը (մեկուսացված) մեծ մասամբ լինում է ե-
րիտասարդ և հասունացած հասակում: Թոքը տուբեր-
կուլյողի նկատմամբ ամենազգայուն օրդանն է և այս-
տեղ մենք ամենից հաճախ ենք հանդիպում այդ տեսակ
պրոցեսի: Նման պրոցեսների դեպքում օրդանիզմի հա-
մեմատարար քիչ ռեակտիվություն է նկատվում և պը-
րոցեսը արագ տարածման հակում չի ունենում: Այս-
պիսով մենք տուբերկուլյողային պրոցեսի զարգացման
հիմնական տիպեր ենք համարում երկուսը. 1) ընդհա-
նուր հեմատոզեն տարածման տիպը, 2) մեկուսացված
ախտահարման տիպը:

Բացի դրանից, այս երկու հիմնական տիպերին
կարող է միանալ նաև այսպես կոչված՝ ինֆիլտրատ-
ների և սուր պնեվմոնիի պրոցեսների տիպերը:

ԹՈՒՅԱՅԻՆ ՏՈՒԻԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Թոքային տուբերկուլյոզի նշանները լինում են ընդհանուր, որոնք կախված են զանազան օրգանների ու սիստեմների ֆունկցիայի խանգարումից, ընդհառուր ինտոկսիկացիայի հետևանքով և տեղական նշաններ, այսինքն չնշառական օրգանների ախտահարումներ:

Ամենից առաջ անհրաժեշտ է ծանոթանալ թե հիվանդի և թե շրջապատողների անցյալի հետ՝ հոր, մոր և ընտանիքի մյուս անդամների առողջությունը՝ նրանց հիվանդությունները. անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքի կենցաղային ու սոցիալական պայմանները, հիվանդի աշխատանքի պայմանները: Այս ամենը որոշ չափով պատկերացում է տալիս օրգանիզմի ունեցած և ձեռք բերած առանձնահատկությունների, աբրուպին միջավայրի նկատմամբ ռեակցիաների մասին:

Հուբերկուլյոզով հիվանդների տեսնքը կախված է ջերմականոնավորման խանգարումից— ընդհանուր ինտոկսիկացիայի հետևանքով, որ առաջացնում են բազցիլների տոկսինները, նրանց քայլքայման պրոդուկտները, տուբերկուլյոզով ախտահարված հյուսվածքների քայլքայման պրոդուկտները: Բացի դրանից, նաև օրգանիզմի կենսագործության ամեն տեսակ զգալի տատանումները— այդ ամենը խախտում է տուբերկուլյոզով հիվանդների անկայուն ջերմականոնավորումը և նպաստում է տեսդային երևոյթների ուժեղացման: Թոքերի տուբերկուլյոզի, գեպքում բարձր ջերմաստիճանը (տաքությունը) հատուկ ուշադրություն պետք է դրավի, որովհետեւ այն հաճախ հանդիսանում է ինտոկսիկացիայի և տուբերկուլյոզային պրոցեսի ակտիվության խիստ նույր, վաղ, և օբեկտիվ նշան: Դա տաքության կորագծով մոտավորապես արտացոլվում է տուբերկուլյոզի ինֆեկցիայի զարգացման ընթացքը:



ցիան իր մեջ հատկապես բնորոշ ոչինչ չունի այդ ին-
ֆեկցիայի համար, ավելի շուտ բնորոշ են նրա անորո-
շությունը և անկայունությունը, ինչպես և հենց
տուրերկուլյոզային պրոցեսների ընթացքը։ Զկա մը-
տական կապ կորագծի բնույթի և պրոցեսի ձեւի
միջև, բայց, ընդհանրապես, կարող ենք մատնանշել,
որ ջերմաստիճանն ամենից խիստ բարձրանում է սուր
և ուժեղ պրոցեսների դեպքում, որտեղ քայլքայման կամ
միլիարդիզայիայի տենդենց ունեն։ Խրոնիկական այս-
պես կոչված՝ Փիբրոզային պրոցեսները, որտեղ կծկման
և սպիացման տենդենցներ ունեն, ավելի սակայն արտա-
չայտված ջերմաստիճանային կորագծեր են տալիս։

Քրտինք։ Ուժեղ քրանոսությունը, որ լինում է տե-
ղական (կուրծքը, թենատակերը, գլուխը) կամ ընդ-
հանուր, Փիզիկական ոչ մեծ լարվածությունների դեպ-
քում, նկատվում է արդեն հիվանդության հենց սկզբ-
րում։ այնուհետև երևացող քրտինքը երբեմն լինում է
խիստ զգալի գիշերվա վերջում, մարմնի ջերմաստիճա-
նի ուժեղ տատանումների ժամանակ, ուժերի անկման
թուլության ծանր զգացում է լինում։ Բարձր տաքու-
թյամբ և կախեկտիկ (հյուծված)։ Հիվանդների մոտ
լինում է «տանջալի քրտինք»։

Նիհարում։ Քաշի անկայունությունը և նիհարե-
լու հակումը տուրերկուլյոզով հիվանդների բնորոշ գե-
ծըն են հանդիսանում։ Այս սիմպտոմի հետևանքով շատ
հին ժամանակներից հիվանդությունն ստացել է Փը-
տիզիս (physis) անունը, ոռուների մոտ— չախոտիկա։

Մարմնի քաշի տատանումները ջերմաստիճանի տա-
տանումների հետ մեկտեղ ծառայում են իրբեկ առավել
հասարակ և օրեկտիվ եղանակ՝ տուրերկուլյոզով հի-
վանդի ընդհանուր վիճակը որոշելու համար։

Երբ օրգանիզմում քայլքայման պրոցեսները սկսում են
գերակայուել յուրացման ու վերականգնման պրոցեսներից,
ընականաբար օրգանիզմը սկսում է կորցնել իր կուտա-
կումները, սկսվում է նիհարումը։ Օրգանիզմն ավելի
շատ է կորցնում, քան ձեռք բերում, ստացվում է զե-

Փիցիսային վիճակ: Նիհարումը հաճախ լինում է սկզբանով հիվանդության առաջին արտաքին արտահայտությունը:

Մենք հենց այստեղ պետք է մատնանշենք, որ քառակի աճումը միշտ չէ, որ զուգահեռ է ընթանում հիվանդության մնացած բոլոր երևույթների բարելավման հետ, մանավանդ տեղական պրոցեսի բարելավման հետ: Լրացուցիչ քաշը, որ ստացվում է ուժեղացրած մննդից ու հանդստից, սանսատորային բուժման ժամանակ,— արագությամբ չքանում է, եթե դրա հետ մեկտեղ չի կատարվել պրոցեսի ակտիվության կայուն իջնցում:

Ենչարգելությունը նույնքան թոքային սիմպտոմ է, որքան և սրտային: Թոքախտավորների շնչարգելությունը լինում է գլխավորապես ֆիբրոզների, թոքերի կծկման դեպքում, թոքային անոթների սկլերոզով և թոքային ալվեոլների լեցմամբ հանդերձ: Այն կախված է թոքերում թթվեցնող պրոցեսների պակասելուց, որ հետեւանք է նրանց կապիլյար ցանցի սահմանափակման:

Հազ: Հազը և խորիսի արտաթորումը հանդիսանում են թոքերի տուրերկույրողային ախտահարման առավել հաճախակի սիմպտոմը: Հազը նորմալ միջոց է շնչառական ուղիներից կուտակված պարունակությունը հեռացնելու համար, բայց հազի ուժը, տևողությունը, համառությունը կախված են ոչ այնքան բրոնխիաներում կուտակված լորձունքի և քայլքայման պրոդուկտների քանակությունից, որքան բրոնխների լորձաթաղանթի գրգռվածությունից: Բարձր զգայնությունը պայմանավորվում է իններվացիայի խանգարմամբ, որ կախված է հենց նրա մեջ կտտաբվող բորբոքման արդուկանից, ինչպես նաև ոեֆլեկտոբային կենուքուների գրգռվածությունից: Այս պատճառով հազի ուժը հաճախ չի համապատասխանում նրա օրեկտիվ պատճառներին: Հազի ցնցումները մեխանիկորեն գրգռում են հիվանդ թոքերը և պլեվրան, խանգարում են

արյան շրջանառությունը, նեղում են հիվանդին, խանգարում են քունը:

Արյունախխում և թռքային արյունահօսություն Արյունախխում է կոչվում արյան խառնուրդը զանազան քանակությամբ խորիս հետ։ Այրունահօսությունը թոքերից՝ թոքային արյան արտաթորումն է առանց խորիս։

Արյան երեալը պայմանավորվում է արյան անոթների պատերի ամբողջականության խախտումով։

Հաճախ թոքային արյունախխումն ու արյունահօսությունը թոքային տուրերկուլյողի առաջին սիմպտոմն են հանդիսանում։ Խորիս մեջ արյան երեալը ձնչող տպավորություն է թողնում հիվանդի և շրջապատղների վրա։ Հիվանդները երեմն առաջին անգամ դիմում են բժշկին՝ միայն արյունախխման մասին դանդատվելով։

Թոքային արյունախխումների մեխանիզմը տարբեր է լինում։ Ամենից հաճախ դրա պատճառը քայլքայվող տուրերկուլյողային օջախում դտնվող անոթի պատի ամբողջականության խախտումն է։ Ֆիզիկական լարվածությունը, հազի և հոգեկան հուգման ժամանակ արյան ձնչման բարձրացումը, ինչպես նաև արյան փոքր շրջանառության մեջ կանգային երեւութների ժամանակ, սրտի աշխատանքի թուլացման հետևանքով, կարող է առաջանալ արյունախխում։ Երեմն արյունախխումը կապվում է անոթի պատի թափանցելության խախտման հետ։

Նկատված է թոքային արյունախխման կախումը մթնոլորտային պայմաններից՝ մթնոլորտի բարոմետրիկ ձնչման պակասումից հաճախանում է արյունախխումը։ Գարնանը դա ավելի հաճախ է նկատվում, քան մյուս սեղոններում։

Թոքային արյունահօսությունները վտանդավոր են իրենց բարդություններով, — բորբոքման պրոցեսների առաջացմամբ, տուրերկուլյողային պրոցեսի դիսումինացիայով, բրոնխների փակումով։

Թոքային արյունախխումը կամ արյունահոսությունը բնավ կապված չէ միայն թոքերի տուբերկուլյողի հետ: Թոքերի ոչ-տուբերկուլյողային պրոցեսները, սրտա-անոթային հիվանդությունները նույնպես կարող են արյունահոսություն առաջացնել:

Կրծքի ցավերը թոքերի տուբերկուլյողի բնորոշնշան չեն հանդիսանում: Հաճախ այդ ցավերը կապված են լինում ներվային սիստեմի հիվանդությունների հետ: Ցավերն առանձնապես ուժեղ են լինում, երբ միաժամանակ ախտահարգում է պլեվրան:

Զարկերակի արագացումը տուբերկուլյողի հաճախակի սիմպտոմներից մեկն է: Նույնիսկ չնչին Փիզիկական բեռնվածության դեպքում խիստ արագանում է զարկերակը: Հաճախ սրտի խփոցը լինում է առաջին սիմպտոմը, որը տուբերկուլյողի հիվանդին դրդում է դիմել բժշկական օգնության:

Այսպիսով տենդը, չնչարգելությունը, հազը, քըրտինքը, նիհարումը, արյունախխումը, զարկերակի արագացումը ամենից հաճախ բնորոշում են թոքերի տուբերկուլյողային ախտահարումը: Բայց միշտ չէ, որ մենք ունենք լիակատար պատկեր վերոհիշյալ տվյալներով: Երբեմն տուբերկուլյողը սկսվում է զրիպի ձևով և հաճախ զրիպի տեղ է ընդունվում, այնուհետև արդեն երևան են գալիս այնպիսի նշաններ, որոնք բնորոշ են տուբերկուլյողի համար: Հաճախ լսում ենք, թե հիվանդը սկզբում հիվանդացել է զրիպով և ապա հիվանդությունն անցել է թոքերը և տուբերկուլյոգ է տվել: Իրոք զա այդպես չէ, այլ տուբերկուլյողի արտահայտությունը եղել է հենց սկզբից, բայց զրիպին նմանվող երկույթներով: Ճիշտ է, պետք է մատնանշել նաև այն հանգամանքը, որ թոքերի խրոնիկական, մեղմացած տուբերկուլյողային պրոցես ունեցող հիվանդների մոտ զրիպը կարող է պրոցեսի սրացում (ակտիվություն) առաջացնել: Տուբերկուլյոգը կարող է ըսկըսվել նաև որովայնատիֆի բնորոշ նշաններով: Հաճախ այդպիսի հիվանդներին բուժում են որպես տիֆոով հի-

վանդների, պահպանում են խիստ, միայն տիֆով հեշտանդներին անհրաժեշտ դիետա և հենց դրանով էլ տվելի են քայլայում նրանց:

Տուրերկուլյողի սկզբնական արտահայտումը կարող է սկսվել գեղձերի ախտահարումից, որ առանձնապես հաճախ է պատահում երեխաների հետ:

Երբեմն թոքային պրոցեսը քողարկվում է պլենլրացի, պերիպլելիրիտի երկլորդական ախտահարումով և դրանց հետ կապված՝ գեղձերի ախտահարումներով:

Տուրերկուլյողի համար բնորոշ է պոլիմորֆիզմը, այսինքն միևնույն օրգանը կարող է տալ տարրեր ձեւերի տուրերկուլյող, բացի դրանից, համարյա չկա ոչ մի օրգան, որն առհասարակ անխոցելի լինի տուրերկուլյողի նկատմամբ:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՂԸ

Մծկեր երեխաները տուրերկուլյողով հիվանդանում են սովորաբար ծանր ձևով և մեծ մահացություն են տալիս: Բայց ծանր ախտահարումների հետ մեկտեղ պատահում են տուրերկուլյողի նաև թույլ արտահայտված, լավորակի ձևեր:

Երեխաների մեծանալուն զուգընթաց ավելանում է տուրերկուլյողով վարակելիությունը, բայց պակասում է ծանր հիվանդների տոկոսը:

Երեխաների մեջ սկզբնական օջախն ամենից հաճախ զարգանում է թոքերում: Հետագայում զարգանում են բորբոքման սովորական պրոցեսները, թե թոքերում և թե թուարմատի ավշագեղձերում, երկու կողմից ախտահարելով բոլոր արմատամերձ ռեռծեռո: Ընդհանրապես, երեխայի ավշային սիստեմը, անոթներն ու գեղձերը լայն մասնակցություն են ունենում ինֆեկցիայի տարածման: Դրա հետ միաժամանակ գեղձերը պատնեշ են գառնում, մի կողմից սահմանափակելով ինչ ֆեկտայի տարածումը, իսկ մյուս կողմից մորիլիզացիայի ենթարկելով միջոցները՝ տուրերկուլյողի դեմ

պայքարելու համար։ Բորբոքման սկզբնական պրոցես-
ները (ինֆիլտրատիվ) հաճախ բարդանում են ոլլեվրա-
յի, որովայնամիզի բորբոքումով։ Երբեմն էլ պատճառ
են գառնում ամբողջ օրդանիզմում տուբերկուլյոզի
ընդհանուր (генерализованного) տարածման, մանավանդ
վաղ ժանկության հասակում։

Մանկական տուբերկուլյոզն ունի իր առանձնա-
հատկությունները, որոնք պետք է նշել։ Հաճախ տու-
բերկուլյոզի բացիները ավշային և արյունատար հու-
նով անցնում են մյուս օրդանները և այնուղ տուբեր-
կուլյոզային նոր պրոցես են առաջացնում։ Այսպես, ե-
րեխանների մեջ մենք հանդիպում ենք մաշկի, հողերի և
ուկորների, աղիքների, երիկամների, ուղեղի թա-
ղանթների (մենինգիտ) տուբերկուլյոզային ախտահա-
ռում։

Երբեմն էլ տարածվելով ավշային արյան հոսան-
քով, նրանք ախտահարում են առաջացնում բոլոր օր-
դաններում, առաջացնում են բնդհանուր, տարածված
տուբերկուլյոզ, որ կոչվում է միլիար տուբերկուլյոզ։
Երեխան աստիճանաբար, մեծանալով, բարձրացնում է
իր զիմառերողականությունը, պակասում է տեղական
ծանր ախտահարումների տոկոսը, պակասում են նաև
ընդհանուր տուբերկուլյոզի զեպքերը։ Մեծահասակ ե-
րեխանների մեջ տուբերկուլյոզը հաճախ ծածուկ է ըն-
թանում։ Ինֆեկցիայի ներթափանցումից հետո ընդհա-
նուր վիճակը սկսում է աստիճանաբար վատանալ,
երեխան է գալիս մնուցման և աճման խանգարում, երե-
վան է գալիս տաքություն, թուլացնող քրտինք։ Եթե
մենք չենք հանդիպում տեղական, պարզ արտահայտ-
ված պրոցեսների, ապա բնդհանուր վիճակը ցույց է
տալիս ուժեղ ինդոկսիլացիա (օրդանիզմի թունավո-
րում), որ առաջանում է օրդանիզմում տուբերկուլյոզի
թացիների ներկայությունից։ Հիվանդության այս ձե-
մը մենք հաճախ հանդիպում ենք աշակերտների մեջ,
այն կոչվում է «խրոնիկական տուբերկուլյոզային ին-
առոկսիլացիա»։

Հաճախ, չնայելով վարակման, սկզբնական ախտահարումը չի զարգանում: Սկզբնական օջախն արագությամբ լավանում է: Երեխան առողջ է մնում, թեպետև նա վարակված է տուբերկուլյոզով: Այդպիսի երեխաների մոտ հաճախ Պիրկեի ռեակցիան դրական, է, որ ցույց է տալիս ինֆեկցիայի նկատմամբ ձեռքբերված նոր ռեակտիվությունը:

Պատանեկական հասակում ավելանում է այն երեխաների, թիվը, որոնք վարակվել ու տարել են սկզբնական նախնական տուբերկուլյոզը: Այս երեխաները մեծ մասամբ հակված չեն լինում տուբերկուլյոզի ցուպիկով նոր վարակման, այսինքն որոշ նորմալ պայմաններում գործնականապես նրանք առողջ են: Բայց, զանազան պատճառների ազդեցությամբ, օրինակ՝ մասսիվ, կրկնվող վարակումը տուբերկուլյոզով, կենցաղային վատ պայմանները, որոշ հիվանդություններից հոգնածությունն ու թուլությունը, — խախտվում է այդ վիճակը, սուր բնույթ են ստանում ծածուկ, ոչ ակտիվ տուբերկուլյոզային օջախները, ու տուբերկուլյոզով հիվանդանալու նոր գեղք է տեղի ունենում:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԱՐՏԱՀԱՅՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

Մինչև 5—7 տարեկան երեխաների մոտ հաճախ լինում են քոքագեղային ինֆիլտրատիվ պլոցեսներ: Սովորաբար սկզբնական օջախը լինում է թոքի մեջ և ախտահարվում են համապատասխան կողմի բրոնխիալ գեղձերը: Հաճախ այդ սկզբնական հիվանդությունը հիշեցնում է զրիպը կամ թոքերի բորբոքումը, երբեմն էլ գրանց միանում է պլեվրիտը: Երկարատև տաքության գեպքում հաճախ մտածում են տիֆով հիվանդանալու մասին: Սովորաբար մի քանի ամիսների ընթացքում ինֆիլտրատը ներծծվում է թոքերում ու գեղձերում թողնելով սպիների բնույթի փոփոխություններ: Բայց պատահում է նաև, որ կատարվում է քայ-

քայում և փոխանցում տուբերկուլյոզային բնույթի պնեյմոնիային:

Հաճախ թոքային փոփոխությունները սակավ են արտահայտվում, բայց դրա փոխարեն բրոնխիալ զեղութերի ախտահարումն առանձնապես զգալի է լինում, ստացվում է այսպես կոչված՝ բրոխադենիտ, այսինքն բրոնխիալ դեղձերի տուբերկուլյոզային հիվանդություն: Բրոնխադենիտները երեխանների մոտ հաճախ են պատահում, բայց ո՛չ բոլոր բրոնխադենիտներն են կապված լինում տուբերկուլյոզի հետ:

Հաճախ չի հաջողվում տեղական որևէ փոփոխություն նշել կամ դրանք լինում են թույլ արտահայտված, բայց դրա փոխարեն օրգանիզմը խիստ թունավորված է լինում: Կա նաև հիվանդության մի ուրիշ ձև, այսպես կոչված՝ խրոնիկական տուբերկուլյոզային պրոցեսը սկզբնական օջախից տարածվում է ամբողջ օրգանիզմում, բացի լիներն արյան միջով. թափանցում են բոլոր օրգանները և ստացվում է տուբերկուլյոզի ծանր դիսումինացված ձևը, այլ կերպ ասած՝ միջնարձեւ. այս կարդին են պատկանում մինինգիտները, ինչպես նաև դիսումինացիայի մյուս հեմատոգեն ձևերը:

Վերջապես, երեխանների մոտ, ինչպես և չափահասների, կարող է լինել սովորական թոքախտ, քայլքայումով խոռոչների (կավերի) առաջացումով հանդերձ:

Մենք պետք է առանձնապես կանդ առնենք սկզբանությունը:

Երեխանների մոտ տուբերկուլյոզը առանձնապես հաճախ չի ախտահարում թոքերը:

Բացի լիները սկզբնական օջախից ցրվում են արյան միջով և կարող են առաջացնել այլևայլ օրգանների, օրինակ, ոսկորների ախտահարում, ուր և սկսվում է այսպես կոչված՝ ոսկրային տուբերկուլյոզը: Մանկական հասակում ամենից հաճախ է պատահում մաշկի, և ավշագեղձերի, հիվանդացումը:

սկրովուլյոգ կամ գեղձախտ անունով։ Գեղձերը մեծանում են, հաճախ թարախակալում, յուրաքանչյուրը տալիս է շատ խոցերի և սիլիչներ, հաճախ բորբոքվում են աչքերի եղջրաթաղանթները, կոպերի մաշկը. այդ հակումը գեղի լորձաթաղանթների կատարքները կոչվում է էխուդափափիլ դիարեզ։

Սկրովուլյոգային երեխան խիստ բնորոշ տեսք ունի, — հարբուխ, լուսավախ, թարախահոսում աչքերից, ականջներից և բաղմաթիվ խոցեր մաշկի վրա։ Դուք հավանորին տեսած կլինեք այդպիսի երեխաններ։

Երեխանների մեջ հաճախ են լինում պլեվրայի և որովայնամիզի տուբերկուլյոգային ախտահարումները։

Տուբերկուլյոգը երբեմն ախտահարում է երեխանների աղիքները և մեզենաերիալ (անդրոբովայնային) գեղձերը։

ՈՍԿՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՈԴԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԳ

Տուբերկուլյոգի օջախից, որ գանվում է մեծ մասսամբ գեղձերում կամ թոքային հյուալածքում, տուբերկուլյոգի վարակը արյան հոսանքով թափանցում է ոսկորներն ու հողերը և՝ դրանց ախտահարում է առաջացնում։ Ոսկրա-հողային տուբերկուլյոգով հիվանդանում են առավելապես երեխաններն ու պատանիները, սակայն դեպքերում — չափահասները։ ամենից շատ հիվանդանում են մինչև 3 տարեկան երեխանները։

Եթե տուբերկուլյոգային պրոցեսի սկզբնական օջախը, որ ծագում է զլիսավորապես վաղ մանկական հասակում, չի լավանում, ապա միկրոբները ավշային և արյունատար ուղիներով թափանցում են հողերի մեջ, և այսուեղ տուբերկուլյոգային սպեցիֆիկ պրոցես է զարգանում։ Այլունատար անոթների միջով այդ փոխանցումը մետատագ է կոչվում։ Երեխանների մոտ պրոցեսի այդ աշխատացումը և փոխանցումը մեծ մասսամբ կապվում է կարմրուկով, կապույտ հազով հիվանդանալու հետ։ Երեխանների հարազատները սովորների և հողերի ախտահարումը հաճախ կապում են վը-

նասավածքի հետ, ընկնելու-խփվելու հետ և այլն: Այդ
ճիշտ չէ: Առանց տուրերկուլյողի միկրոբի պրոցեսը չի
կարող զարգանալ, վնասվածքը միայն նպաստավոր
պայմաններ է, ստեղծում տուրերկուլյողի ֆիկսացիայի
համար:

Ոսկրա-հողային աղարատի ախտահարման սկիզբը
և ընթացքն աննկատելի են լինում: Հիվանդությունը
հարազատների ուշադրությունն է դրավում այն ժա-
մանակ, երբ նկատելիորեն խանդարվում է օրգանի
ֆունկցիան կամ փոխվում է նրա ձևը:

Երեխաները մեծ մասամբ աշխատում են խնայել
ախտահարված հողը: Հբաժարվում են քայլելուց, ե-
րեվանի է գալիս կաղություն, ախտահարված մասի
ոնշարժություն:

Այդպիսի երեխաների մեջ լինում են ընդհանուր
կարգի երեսույթներ, որոնք ցույց են տալիս նրանց հի-
վանդ վիճակը, — նիհարում, ախորժակի բացակայու-
թյուն, զղայնություն: Երեխան այլևս չի խաղում,
աշխատում է ժամանակը նստած անցկացնել, անհան-
դիստ է քնում: Երբեմն տաքությունը մի քիչ բարձրա-
նում է: Հիվանդության ամենավաղ նշանն է հանդիսա-
նում հոգի ձևի փոփոխումը: Որովհետեւ հոգն այլեւ
չի աշխատում, հետզհետեւ երեխան է գալիս մկանների
ասրովիա, այսինքն հողակապերին կից և նրանցից
կախված մկանները սկսում են նիհարել: Այնուհետեւ
այդ երեսույթները սկսում են աճել: Հոգի մեջ էքսու-
զատ (բորբոքային հեղուկ) է կուտակվում, հողը մե-
ծանում է, կորցնում իր ձեր: Ներսում ոսկորը սկսում
է քայքայլել: Հողակապը թարախակալում է և հաճախ
թարախը դուրս գալու համար սվիչներ է առաջաց-
նում:

Անհրաժեշտ է հիվանդությունը հայտաբերել հենց
սկզբից, որպեսզի հնարավոր լինի այն բուժել կոնսեր-
վատիվ ճանապարհով, չթողնելով, որ ոսկորահյուս-
վածքն ուժեղ քայքայման հասնի: Դրա համար անհրա-
ժեշտ է հախ և առաջ բարձրացնել օրգանիզմի դիմադ-

ըողականությունը և տեղական պրոցեսի նկատմամբ
այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք կապահովեն
նրա լավագույն ընթացքը: Դրա համար պահանջվում է
հմուտ կերպով օգտագործել օդը, արեր, սնունդը և
ախտահարված օրդանիզմի հանգիստը, իսկ այդ մենք
կարող ենք հաջողեցնել անշարժացման (ԱՄՄՕԲԽԼԻԶԱՑԱՅԱ)
միջոցով, այսինքն՝ ոսկրա-հողային ապարատը պահե-
լով անշարժ, պահանջվող դիրքում:

Օդով բուժումը (աչբոտերապիա) պետք է կա-
տարվի լայն չափով, տարյա բոլոր եղանակներին:

Սքաբուժումը (հելիոտերապիա), հանդիսանալով
մի հզոր գործոն ոսկրա-հողային տուբերկուլյոզը բու-
ժելու ժամանակ, պետք է լայնորեն կիրառվի բուժող
բժշկի խիստ ցուցումով:

Սնունդը, աչբոտերապիան, հելիոտերապիան և
հանդիսար ոսկրային տուբերկուլյոզի բուժման դորձի
հիմքն են հանդիսանում:

ՄՅՈՒՍ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԸ

Բացի թոքերի, ոսկրա-հողային ապարատի, գեղ-
ձերի ախտահարումից, տուբերկուլյոզային ինֆեկցիան
կարող է արտահայտվել նաև մյուս օրդաններում, օ-
րինակ, մաշկում, երիկամներում, աչքերում, կոկոր-
դում, աղիքներում և այլն: Տուբերկուլյոզով հիվանդի
նկատմամբ պետք է հաշվի առնվեն մյուս օրդանների
ամեն տեսակ փոփոխությունները, որովհետեւ հաճախ
պրոցեսը ախտահարում է մյուս օրդանները: Պլեվրիտ-
ները, պերիտոնիտները նույնպես հաճախ ենթարկվում
են տուբերկուլյոզային ախտահարումներին և հանդիսա-
նում են հիվանդության թեպետե երկրորդական, բայց
ինքնուրույն արտահայտված ձևը:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ

Ի տարբերություն կապիտալիստական երկրներից,
ուր պետությունները թույլ մասնակցություն են ունե-
նում տուբերկուլյոզային հիմնարկությունների, Փե-

նանսավորման, որոնք պահպում են մունիցիպալիտետների, սոցիալական ասբահովագրության և բարեգործական կազմակերպությունների միջոցներով, — Սովետական Միությունում տուբերկուլյոզի դեմ պայքարելու ամբողջ գործը գտնվում է պետության ձեռքում և կատարվում է միասնական պյանով:

Տուբերկուլյոզն անկախ իր արտահայտություններից — այս կամ այն օրգանի հիվանդանալուց, — պետք է համարվի որպես ամբողջ օրգանիզմի հիվանդություն. այստեղից էլ բխում է ընդհանուր սանհիտարական-էպիդեմիոլոգիական և պրոֆիլակտիկ միջոցառումների անհրաժեշտությունը:

Հակատուբերկուլյոզային հիմնարկությունների հիմնական օղակն է հանդիսանում դիսպանսերը: Որո՞նք են դիսպանսերի խնդիրները: Տուբերկուլյոզի իր ժամանակին և լրիվ հայտաբերում, հաշվի առնել և հետամուտ լինել տուբերկուլյոզով հիվանդներին և առողջ կոնտակտներին, այսինքն այն մարդկանց, որոնք միշտ շփում են տուբերկուլյոզով հիվանդների հետ, հիվանդների բուժում, պրոֆիլակտիկ և սանհիտարական-էպիդեմիոլոգիական աշխատանք, աշխատանքի տեղափոքելը, սանհիտարական լուսավորություն տուբերկուլյոզի նկատմամբ:

Դիսպանսերներում ընդունելությունը փակ է, այսինքն ամեն ոչ քի կարող իր ցանկությամբ գնալ դիսպանսեր, տվյալ անձնավորությանը պետք է ուղարկի բուժող բժիշկը, եթե վերջինս գտնում է, որ հիվանդը պետք է գտնվի դիսպանսերի հսկողության տակ:

Այն բոլոր հիվանդները, որոնց մեջ տուբերկուլյոզ է հայտնաբերված, գտնվում են դիսպանսերի սիստեմատիկ հսկողության տակ: Տուբերկուլյոզային դիսպանսերը բուժօգնություն է ցույց տալիս ամբուրատորային պայմաններում և տանը, հիվանդներին նշանակում և ուղարկում է սանհատորիա, տուբերկուլյոզային հիվանդանոցները:

Տուբերկուլյոզային դիսպանսերների աշխատան-

Քում առանձին տեղ է գրավում տուբերկուլյոզով հիւ-
վանդների առաջին բուժումը:

Տուբերկուլյոզի ինֆեկցիայի դեմ պայքարելու հա-
մար դիսպանսերները շրջանի բնակչության մեջ և բա-
ցիլներ արտադրող հիվանդների ընտանիքներում ան-
հրաժեշտ պրոֆիլակտիկ (նախապահպանական) ձեռ-
նարկումներ է կիրառում: Նա տուբերկուլյոզի դեմ
պայքար է մղում նաև ձեռնարկություններում: Տու-
բերկուլյոզով հիվանդների աշխատանքի հետ ծանոթա-
նալը հարց է դնում նրանց աշխատանքի տեղափորելու
մասին՝ այլ աշխատանքի փոխադրելու իմաստով: Տու-
բերկուլյոզային հիվանդի բնակարանում հականեխում
է կատարվում: Այսպիսով այն ամենն, ինչոր վերա-
բերում է տուբերկուլյոզավորների հիվանդությանը,
աշխատանքին ու կենցաղին, հետաքրքրում է դիս-
պանների, աշխատողներին, և նրանք այս կամ այն ցու-
ցումները և օգնությունն են տալիս:

Հակառակ բերկուլյոզային պատվաստում ըստ Կալ-
մետի: Երկար ժամանակ գիտնականներն աշխատում
էին, որպեսզի հնարավորություն գտնեն արհետական
ճանապարհով կանխելու տուբերկուլյոզով հիվանդա-
նալը: Այդ բավականաշափ հաջողվեց Փրանսիացի գիտ-
նական կալմետիին և նրա աշակերտ Գերենին: Նր-
անք նախապահպանական պատվաստում առաջարկե-
ցին: Տուբերկուլյոզային ցուպիկների (բացիլների) ա-
ճեցման միջոցով, սննդի միջավայրը փոխելով նրանց
հաջողվեց սահանալ այնպիսի ցուպիկներ, որոնք համա-
պատասխան դոզայով մարդու օրդանիզմի մեջ մտցնելու
դեպքում օրգանիզմի մեջ որոշ գիմացկանություն են
ստեղծում հետազա ինֆեկցիաների նկատմամբ, եթե
դրանք տեղի են ունենում կալմետի-Գերենի պատվաս-
տանյութը մացնելուց որոշ ժամանակ անց, — այսպես
կոչված՝ ԲՀՀ—BCG (B—բացիլներ, C—կալմետի,
G—Գերեն)՝ հեղինակների անվան ոկզինատառերով:
Մի քանի տվյալների համաձայն, այդ դիմացկանու-
թյունը մնում է 2 տարի:

Կարեւորն այն է, որ ծծկեր երեխաների կյանքի աշաջին օրերում նրանց պատվաստելու դեպքում մենք չենց դրանով նրանց փրկում ենք տուբերկուլյոզի ծանր ինֆեկցիայից, իսկ երեխաները տուբերկուլյոզով ամենից հաճախ հիվանդանում են այդ հասակում:

Իհարկե BCG-ն չի լուծում տուբերկուլյոզի պրոբեմը, բայց նպաստում է նրա ապագա լուծման:

Այս մեթոդով պատվաստումն առհասարակ կիրառվում է ՍՍՌՄ-ում և մասնավորապես մեղ մոտ, Հայաստանում:

Տուբերկուլյոզի ընդհանուր քերապիան: Ժամանակակից պատկերացումը տուբերկուլյոզի որպես ամբողջ օրգանիզմի հիվանդության մասին՝ համապատասխանորեն փոխել է նաև բուժական բնույթի մեր ձեռնարկումները: Անհրաժեշտ է այնպիսի պայմաններ ստեղծել, որ ամբողջ օրգանիզմում վերակազմավորում առաջանա ռեակտիվության խմաստով, այսինքն տուբերկուլյոզով հիվանդի օրգանիզմն առանձնապես զգայուն լինի, փոխանակման կարգի պրոցեսներում՝ իր համար բարենպատ վիճակով: Առաջին հերթին անհրաժեշտ է ներգործել ամբողջ օրգանիզմի վրա, ինչպես ասում են, ամրապնդել այն, այսինքն հնարավորություն տալ ձեռք բերելու այն բոլոր պրոցեսների նորման ընթացքը, որոնք տեղի են ունենում օրգանիզմում: Նեղ շենքերում, վատ, ծանր օկում, փոշոտ մթնոլորդում կատարվող հոգնեցուցիչ և չափից շատ աշխատանքի դեպքում, անբավարար կամ անկանոն սննդի դեպքում հիվանդությունն արագությամբ ուժեղանում է: Բնդհակառակը, Փիղիկական ու հոգեկան անդորրության, աշխատանքի ու հանգստյան ժամերի կանոնավոր հերթագայության, մաքուր օդի, ռացիոնալ, կանոնավոր սննդի դեպքում տուբերկուլյոզային պրոցեսը կանգ է առնում և հաճախ վերջանում է առողջացմամբ: Հասկանալի է թե ինչու՝ որովհետեւ մենք դըրանով օրգանիզմին հնարավորություն ենք տալիս կանոնավորելու բջիջների կյանքի համար կարեոր պրո-

ցեսները։ Դրանք փոխանակման, թթվեցման, Փերամենտատիվ պրոցեսներն են, որոնք իրենց հերթին, վերակառաւցելով օրդանիզմը, հնարավորությունն են տալիս հաղթահարելու հիվանդագին վիճակը։

Անհրաժեշտ է ամբավնդել օրդանիզմը։ Առանձնապես կարեոր է հիգիենո-դիետիկ ռեժիմը։ Փորձը հաստատել է, որ ճիշտ կազմակերպված և սիստեմատիկորեն կիրառվող ռեժիմը տուրերկույողով հիվանդի բուժման անբաժանելի մասն է հանդիսանում տնային պայմաններում, սանատորիայում, հիվանդանոցում և այլն։

Հանգիստը, չափավորված ֆիզիկական բեռնվածությունները, աշխատանքային տերապիան, թարմ օդը, ռացիոնալ սնունդը, — բայց որում առանձնապես կարեոր են լիարժեք սպիտակուցները, — ճարպանյութերի չափավոր գործածությունը, վիտամինների և հանքային աղերի բավականաչափ ընդունումը, — այս բոլորը չափազանց կարեոր նշանակություն ունին։

Հիգիենո-դիետիկ բուժումը հիմնականում հետևյալըն է։ տուրերկույողային պրոցեսի սրման ժամանակաշրջանում — հանգիստ, ռացիոնալ սնունդ։ Հիվանդության բռնկումը հանգարտիվություն դեպքում — կովկածք և ֆիզիկական վարժություններ։

Պրոցեսի բռնկման դեպքում անկողնում անցկացնելն անհրաժեշտ է։ Այն բոլոր դեպքերում էրբ շարունակակարգը կամ անկայուն տաքությունն է լինում, հիվանդը պետք է գտնվի անկողնում։ Հիվանդին թույլատրվում է քայլել սենյակում (սենյակային ռեժիմ), դուրս գալ պատշգամք, երբ տաքությունը իջնում է մինչև նորմալ աստիճան կամ իրիկնային անհշան տատանումներ է տալիս։ Եթե այդ շարժումները նորից չեն բարձրացնում տաքությունը, ապա հիվանդին թույլատրվում է զրոսնել մաքուր օդում, սկսած 15 րոպեից և ամեն օր աստիճանաբար ամենացնելով ժամանակը, այնպես, որ հիվանդը ժամանակի մեջ մասն անցկացնի մաքուր օդում։

ՄԵԾ նշանակություն ունի թարմ օդի հոսանքը դեպի այն սենյակը, ուր լինում է հիվանդը։ Անհրաժեշտ է հիվանդին ընտելացնել սենյակի օդը շարունակ մաքրելուն։ Տաք օրերին պատռհանները պետք է բաց լինեն, իսկ ձմռանը լավ կլինի քննել օդանցքը բաց արած։

Մաշկի կոփվածքն անհրաժեշտ է հիգիենո-դիետիկ ռեժիմի դեսղում։ Մաշկը շփելը, դուշերը, վաննաները, ինքնամասսաժը՝ պապակովում են քրտնազեղձերի, մաշկի մազանոթների կանոնավոր աշխատանքը և կանոնավորում են ներփային սիստեմի ֆունկցիաները։

Թացիոնալ սնունդը աչքի ընկնող տեղ է գրավում հիվանդի բուժման մեջ։ Սնունդը պետք է լինի ոչ թե չափից անց, այլ բավականաչափ կշտացնող։ Վատ ախորժակ ունեցող հիվանդներին ավելի լավ է ուտելիքը տալ քիչ-քիչ, բայց հաճախ։ Անհրաժեշտ է մտածել վիտամիններ տալու մասին։

Բուժման ֆիզիկական մեթոդները էական տեղ են գրավում տուրերկուլյոզով հիվանդների բուժման մեջ։ Դրանք առոնձնապես կարեոր են այն պատճառով, որ հիվանդների ներփային սիստեմի խախտման դեպքում նպաստավոր ազդեցություն են գործում։ բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը ինֆեկցիայի դեմ։

Այս տեսակետից առաջին տեղն է բոնոքերապիան, այսինքն օդով բուժելը։ Թարմ օդում դտրնվելուց սկսած, կարելի է բժշկի խորհրդով աստիճանաբար ընդունել նուև օդային վաննաներ։ Երկարատև ներդրություն ունենալով անընդհատ շարժման մեջ գտնվողի վրա, աէրոտերապիան հզոր ազդակ է հանդիսանում։ Ճշտությամբ գործադրվելով, այն հանդըստացնող և բարերար ազդեցություն է գործում հիվանդների հոգեբանության և հեշտությամբ գրդուղի վեցետատիվ ներփային սիստեմի վրա։ Նրա ազդեցությամբ բարելավվում է թոքերի վենտիլացիան։ Այդ կապակցությամբ հարթվում են արյան շրջանառության տպաւ-

բատի Փունկցիաների նկատվող խախտումները, լավաշնում է ախորժակը, քունն ավելի հանդիսա է լինում, մի խոսքով, բարելավվում է օրդանիզմի ամբողջ կենսագործումնեռությունը: Այսպիսով աէրոտերապիան հիմնական, հիվանդներին կոփող միջոցառում է: Հիվանդօրդանիզմի վրա ներգործելու այդ ֆակտորը որքան լայն չափով օգտագործվի, այնքան լավ կլինի:

Զքաքուժումը կարող է կատարվել թրջված սրբիչներով մարմինը շփելու, մարմնի վրա ջուր լցնելու, դուշ և վաննա ընդունելու ձևով: Զքային պրոցեդուրաներն ավելի լավ է կատարել առավոտները, նախաճաշից ½ ժամ առաջ:

Հելիոքերապիան, արեարուժումը, կարող է կատարվել սահմանափակ թվով: Հիվանդների համար և միայն բժշկի նշանակմամբ: Կվարց—արհեստական արել նույնպես:

Ֆիզիկական շարժումներ: Երկար ժամանակ ենթագրում էին, թե տուբերկուլյոզով հիվանդներն միայն հանդիսա է հարկավոր: Հանգիստը անհրաժեշտ է տուբերկուլյոզի շատ դեպքերում, բայց զգալի թվով հիվանդների համար անհրաժեշտ է այսպես կոչված՝ մարզման ռեժիմը, մանափանդ այն դեպքերում, եթե պրոցեսը մեղմացած է լինում: Նրանց համար հանդիսար պիտք է հերթագային վարժությունների հետ՝ բժշկի ցուցումով:

Սանատորիական բուժումը, որը թույլ է տալիս առավելագույն էֆեկտիվությամբ և ուցիոնալ կազմակերպված ձևով օգտագործել թոքային տուբերկուլյոզի թերապիայի բոլոր հիգիենո-դիետիկ մեթոդները (աէրոթերապիա, Փիզիկական և հոգեկան հանդիսա, չափավորված շարժում, ռացիոնալ սննունդ և այլն), — ներկայումս տուբերկուլյոզային հիվանդներին ցույց տրվող օգնության հիմնական ձևն է հանդիսանում:

Սպասարկելով ակտիվ և արտահայտված տուբերկուլյոզ ունեցող, հետևաբար աշխատունակությունը կորցրած կամ սակավ աշխատունակ հիվանդներին,

սանատորիաները տուբերկուլյողը բուժելու կամ նրա
առանձին բռնկումը վիկիդացնելու հետ մեկտեղ վե-
րականգնում են նաև հիվանդի աշխատունակությունը:

Դրա համար էլ սանատորիաներում, հիգիենադիե-
տիկ մեթոդի հետ միասին, հետզհետե ավելացնող աշ-
խատանքային պրոցեսներ կազմակերպելու միջոցով,
հիվանդի ուժերի վերականգնման զուգընթաց ստաց-
վում է սովորական վիճակ, որը հնարավորություն է
տալիս հիվանդանոցից դուրս գալուց հետո անցնել աշ-
խատանքային լրիվ բեռնվածության: Այս գեղքերում
աշխատանքը տուբերկուլյողով հիվանդների բուժման
սիստեմում կարևորագույն մարդիչ Փակտոր է հանդի-
սանում:

Կուրորտային-կլիմայական բուժումը խորհուրդ է
տրվում այն հիվանդներին, որոնք տեղում պատշաճ
է ֆեկտ չեն ստանում բուժումից և որոնց աշխատունա-
կությունը կարելի է վերականգնել ավելի կարճ ժամ-
կետներում, կլիմայական Փակտորի ազդեցությամբ:
Այս տեսակետից լավ են լեռնային գոտին, ծովափը:
անտառային ամառանոցները, տափաստանները՝ կումի-
սի հատուկ բուժումով:

Հայաստանն առանձնապես հարուստ է լեռնա-կլի-
մայական կուրորտային վայրերով: Այս տեսակետից
լավ են Արագածի նախալեռները, — մանավանդ հելիո-
տերապիայի համար, — Դիլիջանը, տուբերկուլյողով
հիվանդների, կլիմայական հիանալի կայանը, որ կարող
է օգտագործվել ամբողջ տարվա ընթացքում: Ստեփա-
նավանի բարձրավանդակն առանձնապես լավ է ման-
կական բնակչության համար, Գյուլաքարակի հրաշալիք
սոճու անտառով:

Տանք համառոտ տվյալներ Դիլիջանի մասին: Լեռ-
նա-կլիմայական կուրորտ Դիլիջանը գտնվում է ծովի
մակերեսուց թիվ 1256 մետր բարձրության վրա, երեք
կիլոմետրի հասում ան տեղում, երկու լեռնային գետակների
միացման վայրին մոտիկ: Եթ գերքով Դիլիջանը միև-

Նույն չափով մատչելի է թե Հայաստանի և թե Աղբ-
քեջանի ու Վրաստանի հիվանդներին:

Բուն Դիլիջանը գտնվում է հովիտում, որը ձգվում
է արեւելքից արևմուտք, քամիներից պաշտպանված է
շրջակա Փոքր-Կովկասյան բարձր լեռնաշղթաներով։
Գլխավոր կիրճի երկու լանջերը, մանավանդ հյուսի-
սայինը, ծածկված են խիտ, խառն անտառով, որը քիչ
դեր չի խաղում կուրորտի կլիմայի մեղմացման մեջ։
Բարձունքներում անտառը վերջանում է և սկսվում են
ալպյան մարդագետինները։ Շրջակայքում կան բազմա-
թիվ աղբյուրներ և հանքային ջրեր, որոնց մեջ մեծ
հոչակ ունի «Դիլիջան» աղբյուրը, որ գտնվում է կու-
րորտից 6 կիլոմետր հեռու։ 8 կիլոմետր հեռակորու-
թյամբ գտնվում է լեռնային «Պարզ լիճը»։

Դիլիջանի կլիմայական պայմանները բոլոր տեսա-
կետներից գտնվում են միևնույն մակարդակի, վրա այն-
պիսի հայտնի լեռնա-կլիմայական կայանների հետ,
ինչպես Դավոսը (Շվեյցարիա), Արաստումանը։ Ժամա-
նելով Դիլիջան, առաջին օրերից հետո, որոնք անհրա-
ժեշտ են, որպեսզի օրգանիզմը հարմարվի նոր պայ-
մաններին, — հիվանդները խիստ փոխում են իրենց
կերպարանքը։ Բարելավվում է նրանց ինքնազգացումը,
քունը դառնում է ավելի հանդիսա և խորը, խիստ
լավանում է ախորժակը, կայտառ տրամադրությունը է
առաջանում։ Չքանում է գիշերային քրտինքը, մեղմա-
նում հաղը, տաքությունը համահավասար է դառնում,
չնչառությունն ավելի խորն է լինում։ Ավելանում է
հիվանդի քաշը։

Դիլիջանն առանձնապես կարելոր է ուկրային տու-
րերիւրող ունեցող հիվանդների բուժման համար։
Հելիոթերապիան (արեւի ճառագայթներով բուժվելը),
ինչպես և աէրոթերապիան (օդով բուժվելը) առանձնա-
պիս արժեքավոր են այն տուրերկույողային հիվանդ-
ների համար, որոնց մեջ ախտահարված են ոսկորները,
հողերը, զեղձերը, մաշկը և այլն։

Վերջապես, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել

պնեյմոտորաքսի, մասին։ Այս բառը հաճախ հիվանդնեցի մեջ ծանր տրամադրություն է առաջացնում։ Բանն այն է, որ պնեյմոտորաքսը հանդիսանում է թոքային տուբերկուլյոզի բուժման ամենաէֆեկտիվ մեթոդներից մեկը։ Օդը պլեվրալ խոռոչի մեջ մղելու միջոցով հաջողվում է սեղմել հիվանդ թոքը, նրան հանգիստ տանը շուտ լավանալու համար, տեղում արյան կանգառում առաջացնել, մի բան, որ նույնպես դիմադրում է տուբերկուլյոզի զարդացման, ու դրանով իսկ թոքն ազատում է ակտիվ պրոցեսից։ Շատ հիվանդներ, վախենալով բարդություններից, հաճախ հրաժարվում են բուժման այդ եղանակից և հիվանդությունը թողնում են առանց բուժման։ Եթե բուժող բժիշկը անհրաժեշտ է գտնում պնեյմոտորաքս դնելը, հիվանդը պետք է անպայման համաձայնվի։ Ինչպես և ուրիշ ամեն տեսակ օպերացիայի դեպքում, այսուղ ևս կարող են բարդություններ լինել, բայց դրանք այնքան էլ հաճախակի չեն և ոչ էլ այնքան վտանգավոր են հիվանդի համար, որ տուբերկուլյոզային պրոցեսի զարդացման հնարավորություն առաջանա։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տուբերկուլյոզը բուժելի է։ Ապաքինման դեպքերը խիստ հաճախակի են, և այն բժիշկները, որոնք կապ են պահպանում իրենց հիվանդների հետ, հիշատակում են մեծ թվով անձանց, որոնք ապաքինվել են տուբերկուլյոզից, հիվանդացել են 10 տարի և ավելի առաջ և ներկայումս բոլորովին առողջ են։ Այդ նկատվում է ոչ միայն այն մարդկանց մոտ, ովքեր տառապել են թեթև ձևի տուբերկուլյոզով, այլև թոքերի ծանր ախտահարում ունեցող հիվանդների մոտ։ Իհարկե ինչպես և ուրիշ ամեն մի հիվանդության դեպքում, տուբերկուլյոզն այնքան հեշտ, շուտ և հուսալիորեն է բուժվում, որքան շուտ է դիագնոզվում և որքան հիվանդը համառորեն ու շուտ է սկսում բուժումը։

Հանգստով, օդով բուժելը, ուսցիոնալ սննդով,
անհրաժեշտ հիգիենիկ կանոնների պահպանությամբ
բուժելը, իր ժամանակին կատարվող վարժություննե-
րը, աշխատանքային թերապիան,— այս բոլորն ամ-
րապնդում է օրգանիզմը, նրան ավելի դիմացկուն է
դարձնում ինֆեկցիայի դեմ. ավելի արագ է կատար-
վում սպիացման պրոցեսը և քոյքայված տեղերի լո-
վացումը:

Մեր երկրում սոցիալ-կենցաղային պայմանների
բարելավումն ինքնին նպաստում է մարդկության այս
ամենաչար թշնամու ոչնչացման: Որպես վարակիչ հի-
վանդություն, այն պետք է ճշգրիտ այն պրոֆիլակտիկ
ձեռնարկումների ազցանի մեջ, որոնք կիրառվում են
մեր հակատուբերկուլյոզային պայքարում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	8
Տուքերկուլյողի հարուցիչը	4
Տուքերկուլյողային ինֆեկցիայի աղբյուրները	7
Տուքերկուլյողային ինֆեկցիայի օրգանիզմի մեջ թափանցելու ուղիները	10
Օրգանիզմի դիմադրողականությունը և տուքերկուլյողը	12
Թոքերի տուքերկուլյողային պրոցեսների զարգացումն ու տիպերը	14
Թոքային տուքերկուլյողի նշանները	17
Երեխաների տուքերկուլյողը	22
Ասկորների և հոդերի տուքերկուլյող	26
Մյուա օրգանների տուքերկուլյողը	28
Տուքերկուլյողի՝ դեմ պայքարելու հիմոմքները	28
Եղբակացություն	32



Խմբագիր՝ Ա. Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վ.Ֆ. 11040 Պատվեր 195. Տիրաժ 5000։ Տպագրակ։
2,5 մամուռ հեղ. 1,5 մամ. Ստորագրված է տպագրության
1940 թ. հունիսի 10-ին։

ՀԱՅՈՒ ՄԻՒԽԱՏՐՆԵՐԻ ՍՈԼԵԹԻՆ կից Պոլիգրաֆ և հրատ. Վարչ. 1 տպարան
Երևան, 1940։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0029138

ԳԻՒԾ 60 կ.

A II
1658